Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՇԱՐԺԻՉՆԵՐՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ԱՊՊԱ/» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ «ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-24/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Գյումրի 25.01.2024թ.
ժամ 11:00

Նիստին մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ալեքսանյան (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Պետրոսյան (ԳՊ/ԳԱ),
Անահիտ Հարությունյան (ԳՊ/ԳԱ),
Բացող անդամներ՝ Ա. Դավթյան (ԳՊ/ԲԱ),
Ի. Ջանոյան (ԳՊ/ԲԱ):
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հարությունյան (ԳՊ/ՄՀՄ):

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ա.Ալեքսանյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1) Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները:
3) Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4) Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:
5) Հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին:
6) Տեղեկություններ նախահաշվային գնի և մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ:
7) Գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը:
8) Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
9) Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

(Ա.Ալեքսանյան)

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում www.armeps.am կայքի միջոցով բացվել են ներքոհիշյալ մասնակցների հայտերը և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Գործունեության հասցեն, էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ	Հեռախոսահամար
1	«Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պ. 1 info@liga.am	02589581	+374-60-62-20-20
2	«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, 0014, Կոմիտաս 62շ, 93-93/1 տարածք info@regoinsurance.am	02706942	(+374-60) 50-57-57
3	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Արամի 3,5 info@silinsurance.am	02551341	(+374-60) 54-00-00
4	«ԳՈՐԾԱԿԱԼ 1» ՍՊԸ	Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՍԵՎԱՆԻ Փ., 12/5, 0023 smbatyan.gegham@mail.ru	02835788	077 112 095

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա.Ալեքսանյան)

«ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-24/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է) որպես ներկայացված հայտեր կազմել և ներկայացրել են «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ-ն, «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ն, «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն և «ԳՈՐԾԱԿԱԼ 1» ՍՊԸ-ն:
Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա.Ալեքսանյան)

«ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-24/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մրցույթի հրավերով սահմանված կարգով «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ-ն, «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ն, «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն և «ԳՈՐԾԱԿԱԼ 1» ՍՊԸ-ն հրավերով պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են ամբողջական:
Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին

(Ա.Ալեքսանյան)

«ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-24/01» ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ նախահաշվային գնի և մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

(Ա.Ալեքսանյան)

Մասնակիների կողմից հայտով ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները:

Հ/Բ համարը	Ծառայության անվանումը	Նախահաշվային /կանխատեսվող գնման/ գին	Մասնակցի անվանումը /ներկայացված հայտեր/	Հայտով ներկայացված գնային առաջարկ ՀՀ դրամ		
				Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	TOYOTA LAND CRUISER 150 2.7 GAS, 2010թ., TOYOTA CAMRY 2.4, 2008թ., NISSAN ALTIMA 2.5, 2012թ., VAZ 21074, 2007թ. և VAZ 21214, 2006թ. Շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայություններ	160 000	«Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ	125,000 /հարյուր քսանհինգ հազար/	0 /Զրո/	125,000 /հարյուր քսանհինգ հազար/
			«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ	170,000 /հարյուր յոթանասուն հազար/	0 (զրո)	170,000 /հարյուր յոթանասուն հազար/
			«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	157 000 (հարյուր հիսունյոթ հազար)	0 (զրո)	157 000 (հարյուր հիսունյոթ հազար)
			«ԳՈՐԾԱԿԱԼ 1» ՍՊԸ	125.000 /մեկ հարյուր քսանհինգ հազար/	-	125.000 /մեկ հարյուր քսանհինգ հազար/

«Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ-ի, «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի և «ԳՈՐԾԱԿԱԼ 1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը՝ գնային առաջարկները, համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, իսկ «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը

(Ա.Ալեքսանյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1) «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ-ի և «ԳՈՐԾԱԿԱԼ 1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նվազագույն գնային առաջարկները հավասար են: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերությունների՝ գնահատող հանձնաժողովը.

որոշում է՝

ա) ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «Շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայությունների /ԱՊՊԱ/» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-24/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտարարված մրցույթի նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը հավասար գներ ներկայացրած «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ-ին և «ԳՈՐԾԱԿԱԼ 1» ՍՊԸ-ին համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցման եղանակով, միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:

բ) «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ-ին և «ԳՈՐԾԱԿԱԼ 1» ՍՊԸ-ին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման ժամկետ սահմանել ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, մինչև սույն թվականի հունվարի 29-ը, ժամը 11:00-ն:

գ) Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների գնային առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել մինչև սույն թվականի հունվարի 29-ը, ժամը 11:00-ն էլեկտրոնային տարբերակով՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի shirakimarzpetraran@gmail.com էլ-փոստին կամ թղթային տարբերակով՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի վարչական շենք՝ ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Գ. Նժդեհի 16 հասցեով:

դ) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ե» պարբերության, բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների՝ որոշվում և հայտարարվում են ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցները: Եթե բանակցությունների արդյունքում մասնակիցների ներկայացրած գները մնում են հավասար, գնման ընթացակարգն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա.Ալեքսանյան)

Հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա.Ալեքսանյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2024 թվականի հունվարի 29-ին ժամը 11:00-ին՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում, ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի,Գ. Նժդեհի 16 հասցեով:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Ալեքսանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Պետրոսյան

_____ Անահիտ Հարությունյան

_____ Ա. Դավթյան

_____ Ի. Ջանոյան

Քարտուղար՝ _____ Ա. Հարությունյան